

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՎ-20/1.1**

ք. Երևան

«24» հունվարի 2020թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **21100000 (քսանմեկ միլիոն մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxՕxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²² Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

²² Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սղանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության անկախության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ քննչական կոմիտե

ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

վարչություն,

Հ/Հ 900011000834

ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

ք. Երևան, Ռուբինյանց փ. 31

«Արարատբանկ»ԲԲԸ

Հ/Հ 1510012745550100

ՀՎՀՀ 00873228

Էլ. հասցեն՝ info@flashmorots.am

հեռ. (044)200 220

(ստորագրություն)

Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/501	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	դրամ	21100000	1	ք. Երևան, Ռուբինյանց փ. 31	2020թ.-ի դեկտեմբերի 25

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Հ/հ	ՎԱՁ- 2106- 1999թ, 2003թ, ՎԱՁ 2107- 2007թ ՎԱՁ 2121, 21214 Նիվա, ՈՒԱՁ- 3151 2007, 2008, 2011	Ձ/մ	Միավորի գին
1	Համակարգչային ախտորոշում	հատ	4000
2	Ընդհանուր տեխնիկական ախտորոշում	հատ	4000
1.Շարժիչ			
3	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	20000
4	Շարժիչի վերանորոգում	հատ	65000
5	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	հատ	3000
6	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	հատ	4000
7	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	հատ	10000
8	Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	հատ	1000
9	Շարժիչի գլխիկի հղկում/վերանորոգում	հատ	5000
10	Փականի խցուկի փոխարինում	հատ	500
11	Կափույրի բնիկի նորոգում	հատ	2000
12	Կափույրի ուղղորդիչ վռանի փոխարինում	հատ	1500
13	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	հատ	500
14	Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում	հատ	10000
15	Ատամնավոր փոկի, շխթայի, հանգստարարի և բաշմակի փոխարինում	հատ	
16	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	1500
17	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	1500
18	Ծնկաձև լիսեռի հղկում	հատ	10000
19	Մխոցային օղակների փոխարինում	լրակազմ	12000

20	Կարտերի հանում և տեղադրում	հատ	5000
21	Քիմիական լվացում 1 կտորի համար	հատ	3000
22	Կալեկտորի հանում և տեղադրում	հատ	5000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
23	Յուղի և յուղի գոխի փոխարինում	հատ	1000
24	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	հատ	1000
25	Յուղի պոմպի փոխարինում	հատ	5000
26	Ղեկավարման բլոկի վերանորոգում	հատ	15000
27	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում	հատ	3000
28	Խառնարակի հանում և տեղադրում	հատ	3000
29	Խառնարակի վերանորոգում	հատ	5000
30	Օդի գոխի փոխարինում	հատ	1500
31	Օդորակիչի գոխի փոխարինում	հատ	1500
32	Ինժեկտորի ֆորսունկաների հանում և տեղադրում	լրակազմ	6000
33	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	լրակազմ	10000
34	Բենզամոմի հանում և տեղադրում	հատ	5000
35	Վառելիքի գոխի փոխարինում	հատ	3000
36	Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում	հատ	3000
37	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	հատ	5000
38	Վառելիքի բաքի վերանորոգում, լվացում	հատ	9000
39	Ակտիվատորի հանում և տեղադրում/մաքրում	հատ	5000
40	Տրամյորի հանում և տեղադրում	հատ	3000
	3. Սառեցման և արտաժման համակարգ		
41	Փոկի հանում և տեղադրում	հատ	2500
42	Հովհարի հանում և տեղադրում	հատ	4500
43	Ռադիատորի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	5000
44	Ռադիատորի վերանորոգում	հատ	5000
45	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	5000
46	Թերմոստատի փոխարինում	հատ	3000
47	Ջրի պոմպի փոխարինում	հատ	5000
48	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	3000
49	Խլարարի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	3000
50	Խլարարի ներդիրի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	1000
51	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	1500
52	Վառարանի շարժիչի հանում և տեղադրում	հատ	3000
53	Վառարանի ծորակի հանում և տեղադրում	հատ	2000
54	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	2000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
55	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	4000
56	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	լրակազմ	5000
57	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	հատ	2000
58	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	հատ	3000

59	Կցորդման փողրակի փոխարինում	հատ	2000
60	Կցորդման երկժանիի փոխարինում	հատ	2000
61	Կցորդման կարգավորում	հատ	1500
62	ՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	12000
63	ՓՏ-ի վերանորոգում	հատ	15000
64	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	հատ	5000
65	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	հատ	2000
68	ԱՓՏ-ի և ՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	հատ	5000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
69	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	հատ	8000
70	Բաշխիչ տուփի վերանորոգում	հատ	10000
71	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	հատ	3000
72	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	3000
73	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	հատ	3000
74	Էլաստիկ մուֆտի հանում և տեղադրում	հատ	3000
75	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	հատ	1000
76	Միջանկյալ կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	1000
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
77	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	հատ	10000
78	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	հատ	10000
79	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	հատ	5000
80	Տանող ատամնանիվի խցուկի փոխարինում	հատ	3000
81	Կամրջակի խցուկի փոխարինում	հատ	2000
82	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադրում	հատ	2000
83	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	հատ	500
84	Կիսաստնու խցուկի փոխարինում	հատ	500
	7. Կախոց		
85	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	7000
86	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	հատ	3000
87	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	2000
88	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	1500
89	Անվակունդի բացակի կարգավորում	հատ	1000
91	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	հատ	500
92	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	2000
93	Չսպանակի հանում և տեղադրում	հատ	500
94	Չսպակի հանում և տեղադրում	հատ	2000
95	Չսպակի վռանների փոխարինում	հատ	500
96	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	1000
97	Ցնցամեղմիչի լիցքավորում	հատ	3000
98	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	2000
99	Ներքևի լծակի վռանների փոխարինում	հատ	1000
100	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	2000
101	Միջին ձգանի հանում և տեղադրում	հատ	2000
102	Շոճանակային լծակի հանում և	հատ	2000

	տեղադրում		
103	Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	2000
104	Վերևի լծակի վռանների փոխարինում	հատ	500
105	Գնդե հողակապերի փոխարինում	հատ	2000
106	Ծայրակալների հանում և տեղադրում	հատ	2000
107	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	2500
108	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	4500
109	Հետևի զսպանակի փոխարինում	հատ	1000
110	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	2000
111	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում	հատ	1200
112	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում	հատ	1000
113	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	1000
114	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	հատ	1000
115	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	լրակազմ	1000
116	Շկվոռնու հանում և տեղադրում	հատ	5000
117	Անվաքացքի կարագավորում	հատ	5000
	8. Ղեկային մեխանիզմ		
118	Ղեկային կալունի հանում , տեղադրում/փոխարինում	հատ	8000
119	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	8000
120	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	4000
121	Ղեկային ձողի նորոգում	հատ	4000
122	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	հատ	6000
123	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	հատ	2000
124	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	հատ	3000
125	Ղեկային ժապավենի փոխարինում	հատ	1000
	9. Արգելակային համակարգ		
126	Գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	3000
127	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	հատ	3000
128	Բանվ. գլանի հանում և տեղադրում	հատ	3000
129	Արգելակային համակարգի օդահանում	հատ	1500
130	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	2000
131	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	1000
132	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	3000
133	Հետևի սուպպորտի վերանորոգում	հատ	1000
134	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	2000
135	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	լրակազմ	5000
136	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	լրակազմ	5000
137	Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	2000
138	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	2000

139	Արգելակային սկավառակի հղկում	հատ	4000
140	Արգելակային թմբուկի հղկում	հատ	3000
141	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	հատ	2000
142	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	հատ	5000
143	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	1000
10. Էլեկտրասարքավորում			
144	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	7000
145	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	հատ	3000
146	Գեներատորի հանում և տեղադրում	հատ	4000
147	Գեներատորի վերանորոգում	հատ	6000
148	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	4000
149	Մեկնարկիչի վերանորոգում	հատ	6000
150	Առջևի լապտերի հանում և տեղադրում	հատ	2000
151	Հետևի լապտերի հանում և տեղադրում	հատ	2000
152	Լապտերի լամպի փոխարինում	հատ	1000
153	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	3000
154	Վազքաչափի հանում և տեղադրում	հատ	1000
155	Սարքերի պանելի հանում և տեղադրում	հատ	7000
156	Ազդանշանի հանում և տեղադրում	հատ	2000
157	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	հատ	4000
158	Ապակեամբարձիչի հանում և տեղադրում	հատ	3000
159	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	հատ	500
160	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	2500
161	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	2500
162	Լապտերների կարգավորում	հատ	2000
163	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	1000
164	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	1000
167	Թարթիչի միացման լծակի հանում և տեղադրում	հատ	5000
168	Մարտկոցի հանում և տեղադրում	հատ	2000
11. Այլ ծառայություններ			
169	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	քառ.դմ.	3000
170	Անիվի հանում և տեղադրում	հատ	1000
171	Անվաղողի քանդում և հավաքում	հատ	500
172	Անիվի հավասարակշռում	հատ	1000
173	Նստարանի հանում և տեղադրում	հատ	4000
174	Ծածկոցի ճոպանի հանում և տեղադրում	հատ	3000
175	Դիմապակու հանում և տեղադրում	հատ	5000
176	Դռան պաստառի հանում և տեղադրում	հատ	3000
177	CO-զոդման աշխատանքներ	սմ	1500
178	Արգոնե-զոդման աշխատանքներ	սմ	2000
179	Խառատային աշխատանքներ	կտոր	3000
180	Փականագործի աշխատանքներ	ժամ	2000
181	Ավտոքարշակի ծառայություն (ք.Երևան)		8000
Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները			
1.Շարժիչ			
1	Բարձիկ	հատ	5000
2	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	3000
3	Շարժիչի բաշխիչ լիսեռ	հատ	20000

4	Շարժիչի փական դուրս մղող	հատ	2000
5	Շարժիչի փական ներս մղող	հատ	2000
6	Շարժիչի փականի խցուկ	հատ	500
7	Ուղղորդիչ վռան	հատ	2000
8	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	հատ	2000
9	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	հատ	1000
10	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	լրակազմ	5000
11	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	լրակազմ	5000
12	Հենակային տափօղակ	հատ	1000
13	Մխոց	հատ	4500
14	Մխոցային օղակներ	լրակազմ	10000
15	Ատամնանիվ	հատ	8000
18	Շղթա	հատ	7000
19	Հիդրոձգան	հատ	8000
20	Հրիչ	հատ	2000
21	Հիդրոհրիչ	հատ	6000
22	Բաշմակ	հատ	2000
23	Հանգստարար	հատ	3000
24	Խցուկ բաշխիչ լիսեռի	հատ	1000
25	Շկիվ	հատ	10000
26	Շարժաթև	հատ	10000
27	Կարտերի միջադիր	հատ	1000
28	Առջևի կափարիչի միջադիր	հատ	1000
29	Վերևի կափարիչի միջադիր	հատ	1000
30	Միջադիր	հատ	2000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
31	Յուղ շարժիչի կիսասինթետիկ 10W-40	լիտր	3500
32	Յուղ շարժիչի սինթետիկ 5W-30	լիտր	
33	Յուղի գտիչ	հատ	2000
34	Յուղի պոմպ	հատ	10000
35	Յուղի պոմպի շարժաբեր	հատ	3000
39	Վառոցքի մոմ	հատ	1500
40	Խառնարակ	հատ	20000
41	Խառնարակի վերանորոգման հավաքածու	հատ	5000
42	Ինժեկտորի ֆորսունկա	հատ	10000
43	Վառելանյութի մղիչ էլեկտրական	հատ	15000
44	Վառելանյութի մղիչ մեխանիկական	հատ	11000
45	Վառելանյութի գտիչ կոշտ մաքրման	հատ	2000
46	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	հատ	2500
47	Վառելանյութի փողոակ	հատ	5000
48	Օդի գտիչ	հատ	3000
49	Օդորակիչի գտիչ	հատ	
50	Ջերմաստիճանային տվիչ	հատ	3000
51	Յուղի տվիչ	հատ	1500
52	Բաշխիչ լիսեռի տվիչ	հատ	5000
53	Ծնկաձև լիսեռի տվիչ	հատ	5000
54	Մաքրող հեղուկ ABRO	հատ	2500
58	Բենզոբաքի տվիչ	հատ	6000
59	Մարման ընթացքի կարգավորիչ	հատ	
60	Ղեկավարման համակարգիչ	հատ	50000
61	Հետընթացի տվիչ	հատ	2000

3. Սառեցման և արտածման համակարգ			
62	Հովիար	հատ	5000
63	Ռադիատոր	հատ	20000
64	Ընդարձակող բաք	հատ	5000
65	Ընդարձակող բաքի փական	հատ	1000
66	Հովացման համակարգի փողրակ	հատ	3000
67	Թերմոստատ	հատ	3000
68	Ջրի պոմպ	հատ	15000
69	Սառեցման հեղուկ	լիտր	2000
70	Հոլովակ	հատ	5000
71	Փոկ	հատ	3000
73	Ծորակ	հատ	5000
74	Խլարարի ներդիր	հատ	2000
75	Խլարարի կախոց	հատ	1000
76	Կրոնշտեյն	հատ	1000
77	Անուր (Խամուտ)	հատ	500
78	Վառարանի ռադիատոր	հատ	10000
79	Վառարանի շարժիչ	հատ	15000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
80	Կցորդման բանվորական գլան	հատ	10000
81	Կցորդման գլխավոր գլան	հատ	7000
82	Կցորդման տանող սկավառակ	հատ	15000
83	Կցորդման տարվող սկավառակ	հատ	10000
84	Կցորդման առանցքակալ	հատ	10000
85	Կցորդման փողրակ	հատ	2000
86	Կցորդման ճուպան	հատ	5000
87	Կցորդման եղան	հատ	2000
88	Կցորդման եղանի փոշեթիկնոց	հատ	500
89	Կցորդման հեղուկի տարա	հատ	1000
90	ՓՏ-ի խցուկ	հատ	1000
91	ՓՏ-ի առանցքակալ	հատ	5000
92	ՓՏ-ի լիսեռ	հատ	10000
93	ՓՏ-ի եղանիկ	հատ	5000
94	ՓՏ-ի ատամնանիվ	հատ	10000
95	Համաժամիչ	հատ	4000
96	Մուֆտ	հատ	5000
97	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	հատ	1000
100	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	2500
102	Հերմետիկ	հատ	2000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
103	Բաշխիչ տուփի խցուկ	հատ	1000
104	Բաշխիչ տուփի առանցքակալ	հատ	5000
105	Բաշխիչ տուփի ատամնանիվ	հատ	10000
106	Բաշխիչ տուփի լիսեռ	հատ	10000
107	Էլաստիկ մուֆտ	հատ	5000
108	Կարդանային լիսեռի խաչուկ	հատ	5000
109	Հեղույս մանեկ	հատ	500
6. Առջևի և հետևի կամրջակներ			
110	Ռեդուկտոր		90000
111	Դիֆֆերենցիալ	հատ	12000
112	Դիֆֆերենցիալի սատելլիտ	հատ	3000
113	Տանող ատամնանիվի խցուկ	հատ	500
114	Տանող ատամնանիվի առանցքակալ	հատ	3000
115	Դիֆֆերենցիալի առանցքակալ	հատ	3000
116	Կիսաստնի	հատ	10000

117	Կիսասունու առանցքակալ	հատ	3000
118	Կիսասունու միջադիր	հատ	500
119	Կիսասունու խցուկ	հատ	1000
120	Կարգավորիչ տափօղակ	հատ	1000
7. Կախոց			
121	Տրավերս	հատ	15000
122	Ձախ կամ աջ հողակալ	հատ	15000
123	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց	հատ	1500
124	Անվակունդ	հատ	7000
125	Անվակունդի խցուկ	հատ	1000
126	Անվակունդի ներքին առանցքակալ	հատ	1500
127	Անվակունդի արտաքին առանցքակալ	հատ	2000
128	Ձախ կամ աջ հողակալի խցուկ	հատ	1000
130	Ջսպանակ	հատ	4000
131	Առջևի ցնցամեղմիչ	հատ	10000
133	Ցնցամեղմիչի վռան	հատ	500
134	Ներքևի լծակ	հատ	5000
135	Ներքևի լծակի վռան	հատ	1000
136	Վերևի լծակ	հատ	5000
137	Վերևի լծակի վռան	հատ	1000
138	Գնդե հողակալ	հատ	5000
139	Առջևի կայունարարի վռան	հատ	2000
140	Հետևի կայունարարի վռան	հատ	2000
141	Կայունարարի կանգնակ	հատ	5000
142	Հետևի զսպանակ	հատ	6000
143	Հետևի ցնցամեղմիչ	հատ	10000
144	Հետևի մետաղաձող (շտանգա)	հատ	6000
145	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	հատ	500
146	Անկյունագծային լծակի վռան	հատ	500
147	Շկվոռնի	հատ	8000
148	Շկվոռնու լատունե տակդիր	հատ	2000
149	Ջսպակի վռան	հատ	1000
150	Ջսպակի միջադիր	հատ	200
151	Ջսպակի բռնիչ	հատ	1000
152	Աջ կամ ձախ ձգան	հատ	5000
153	Ծայրակալ	հատ	4000
154	Ձգան մեջտեղի	հատ	5000
155	Քսայուղ լիտոլ	գրամ	1500
156	Քսայուղ Շոուս	գրամ	1500
8. Ղեկային մեխանիզմ			
157	Ղեկային կալուն	հատ	30000
158	Ղեկային կալունի առանցքակալ	հատ	5000
159	Ղեկային կալունի խաչուկ	հատ	5000
160	Հիդրոուժեղարարի փոկ	հատ	2000
161	Հիդրոուժեղարարի փողոակ	հատ	8000
162	Հիդրոուժեղարարի պոմպ	հատ	40000
163	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	հատ	5000
164	Հիդրոուժեղարարի յուղ	լիտր	3000
165	Ճոճանակ	հատ	5000
166	Ճոճանակի վռան	հատ	400
9. Արգելակային համակարգ			
168	Գլխ. գլան	հատ	10000
169	Վակուումային ուժեղարար	հատ	10000

170	Բանվ. գլան	հատ	3000
171	Արգելակային փողրակ	հատ	2000
172	Սուպպորտի ուղղորդիչ	հատ	1000
173	Սուպպորտի մանժետ	հատ	500
174	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	5000
175	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	5000
176	Առջևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	10000
177	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	10000
178	Ձեռքի արգելակի ճուպան	հատ	5000
179	Արգելակային հեղուկ՝ DOT-4 (300գր)	հատ	2000
180	Ձեռքի արգելակի լծակ	հատ	5000
10. Էլեկտրասարքավորում			
181	Գեներատորի դիողային կամրջակ	հատ	5000
182	Գեներատորի ռեյե	հատ	4000
183	Գեներատորի առանցքակալ	հատ	2000
184	Գեներատորի խարիսխ	հատ	7000
186	Ստարտերի ռեյե	հատ	2000
187	Ստարտերի ածուխ	հատ	3000
188	Բենդեքս	հատ	5000
189	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	հատ	5000
190	Ստարտերի խարիսխ	հատ	5000
191	Լամպ	հատ	2000
192	Էլեկտրական անջատիչ	հատ	2000
193	Էլեկտրական տվիչ	հատ	3000
194	Բռնկման կողպեք	հատ	5000
195	Վառոցքային լարերի խուրձ	հատ	6000
196	Վառոցքի մոմի ծայրակալ	հատ	500
197	Վառոցքի կոճ	հատ	7000
198	Ազդանշան	հատ	4000
199	Ապակեվազիչ	հատ	2000
200	Ապակեվազիչի պոմպ	հատ	3000
201	Ապակեվազիչի հեղուկի տարա	հատ	2500
202	Ապակեմաքրիչի շարժիչ	հատ	5000
203	Դոնների էլեկտրական փական	հատ	1500
204	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1 քառ. դմ. վերանորոգման համար	քառ.դմ.	2000

Հ/հ	ՈՒԱԶ- 3163 Պատրիոտ 2015, 2017	Ձ/մ	
1	Համակարգչային ախտորոշում	հատ	4000
2	Ընդհանուր տեխնիկական ախտորոշում	հատ	4000
1.Շարժիչ			
3	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	25000
4	Շարժիչի վերանորոգում	հատ	90000
5	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	հատ	5000
6	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	հատ	9000
7	Շարժիչի բլրկի գլխիկի հանում և տեղադրում	հատ	20000

8	Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	հատ	2000
9	Շարժիչի գլխիկի հղկում/վերանորոգում	հատ	30000
10	Փականի խցուկի փոխարինում	հատ	500
11	Կափույրի բնիկի նորոգում	հատ	2000
12	Կափույրի ուղղորդիչ վրանի փոխարինում	հատ	2500
13	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	հատ	500
14	Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում	հատ	15000
15	Ատամնավոր փոկի, շխթայի, հանգստարարի և բաշմակի փոխարինում	հատ	15000
16	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	1500
17	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	1500
18	Ծնկածն լիսեռի հղկում	հատ	10000
19	Մխոցային օղակների փոխարինում	լրակազմ	15000
20	Կարտերի հանում և տեղադրում	հատ	10000
21	Քիմիական լվացում 1 կտորի համար	հատ	3000
22	Կալեկտորի հանում և տեղադրում	հատ	5000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
23	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	հատ	1000
24	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	հատ	1000
25	Յուղի պոմպի փոխարինում	հատ	5000
26	Ղեկավարման բլոկի վերանորոգում	հատ	20000
27	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում	հատ	5000
28	խառնարակի հանում և տեղադրում	հատ	5000
29	Խառնարակի վերանորոգում	հատ	5000
30	Օդի գտիչի փոխարինում	հատ	1500
31	Օդորակիչի գտիչի փոխարինում	հատ	1500
32	Ինժեկտորի ֆորսունկաների հանում և տեղադրում	լրակազմ	10000
33	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	լրակազմ	12000
34	Բենզամղիչի հանում և տեղադրում	հատ	8000
35	Վառելիքի գտիչի փոխարինում	հատ	4000
36	Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում	հատ	3000
37	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	հատ	10000
38	Վառելիքի բաքի վերանորոգում, լվացում	հատ	9000
39	Ակսելերատորի հանում և տեղադրում/մաքրում	հատ	5000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
41	Փոկի հանում և տեղադրում	հատ	3000
42	Հովհարի հանում և տեղադրում	հատ	5000
43	Ռադիատորի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	10000
44	Ռադիատորի վերանորոգում	հատ	10000
45	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	5000
46	Թերմոստատի փոխարինում	հատ	3000
47	Ջրի պոմպի փոխարինում	հատ	5000
48	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	3000
49	Խլարարի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	3000

50	Խլարարի ներդիրի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	1000
51	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	1500
52	Վառարանի շարժիչի հանում և տեղադրում	հատ	13000
53	Վառարանի ծորակի հանում և տեղադրում	հատ	3000
54	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	2000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
55	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	6000
56	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	լրակազմ	10000
57	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	հատ	2000
58	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	հատ	3000
59	Կցորդման փողրակի փոխարինում	հատ	2000
60	Կցորդման երկժանիի փոխարինում	հատ	2000
61	Կցորդման կարգավորում	հատ	1500
62	ՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	20000
63	ՓՏ-ի վերանորոգում	հատ	30000
64	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	հատ	8000
65	Վազբաշափի շարժաբերի փոխարինում	հատ	2000
68	ԱՓՏ-ի և ՓՏ-ի լուղի և գտիչի փոխարինում	հատ	5000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
69	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	հատ	15000
70	Բաշխիչ տուփի վերանորոգում	հատ	20000
71	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	հատ	5000
72	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	5000
73	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	հատ	5000
74	Էլաստիկ մուֆտի հանում և տեղադրում	հատ	5000
75	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	հատ	2000
76	Միջանկյալ կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	1000
6. Առջևի և հետևի կամրջակներ			
77	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	հատ	20000
78	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	հատ	20000
79	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	հատ	10000
80	Տանող ատամնանիվի խցուկի փոխարինում	հատ	5000
81	Կամրջակի խցուկի փոխարինում	հատ	2000
82	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադրում	հատ	3000
83	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	հատ	500
84	Կիսաստնու խցուկի փոխարինում	հատ	500
7. Կախոց			
86	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	հատ	7000
87	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	8000
88	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	1500
89	Անվակունդի բացակի կարգավորում	հատ	1000

90	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	5000
91	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	հատ	500
92	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	4000
93	Ջսպանակի հանում և տեղադրում	հատ	500
94	Ջսպակի հանում և տեղադրում	հատ	2000
95	Ջսպակի վռանների փոխարինում	հատ	500
96	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	5000
97	Ցնցամեղմիչի լիցքավորում	հատ	3000
98	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	4000
99	Ներքևի լծակի վռանների փոխարինում	հատ	1000
100	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	4000
101	Միջին ձգանի հանում և տեղադրում	հատ	4000
105	Գնդե հողակապերի փոխարինում	հատ	4000
106	Ծայրակալների հանում և տեղադրում	հատ	4000
107	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	6000
108	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	4500
109	Հետևի զսպանակի փոխարինում	հատ	1000
110	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	4000
111	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում	հատ	4000
112	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում	հատ	1000
113	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	2000
114	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	հատ	1000
115	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	լրակազմ	1000
116	Շկվոռնու հանում և տեղադրում	հատ	5000
117	Անվաբացքի կարագավորում	հատ	8000
	8. Ղեկային մեխանիզմ		
118	Ղեկային կալունի հանում , տեղադրում/փոխարինում	հատ	20000
119	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	40000
120	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	4000
121	Ղեկային ձողի նորոգում	հատ	4000
122	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	հատ	6000
123	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	հատ	3000
124	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	հատ	4000
125	Ղեկային ժապավենի փոխարինում	հատ	6000
	9. Արգելակային համակարգ		
126	Գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	5000
127	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	հատ	10000
128	Բանվ. գլանի հանում և տեղադրում	հատ	5000
129	Արգելակային համակարգի օդահանում	հատ	1500
130	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	4000

131	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	5000
132	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	3000
133	Հետևի սուպպորտի վերանորոգում	հատ	3000
134	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	3000
135	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	լրակազմ	5000
136	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	լրակազմ	5000
137	Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	5000
138	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	5000
139	Արգելակային սկավառակի հղկում	հատ	4000
140	Արգելակային թմբուկի հղկում	հատ	3000
141	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	հատ	2000
142	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	հատ	5000
143	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	1000
10. Էլեկտրասարքավորում			
144	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	7000
145	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	հատ	5000
146	Գեներատորի հանում և տեղադրում	հատ	8000
147	Գեներատորի վերանորոգում	հատ	10000
148	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	6000
149	Մեկնարկիչի վերանորոգում	հատ	10000
150	Առջևի լապտերի հանում և տեղադրում	հատ	4000
151	Հետևի լապտերի հանում և տեղադրում	հատ	2000
152	Լապտերի լամպի փոխարինում	հատ	1000
153	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	5000
155	Սարքերի պանելի հանում և տեղադրում	հատ	10000
156	Ազդանշանի հանում և տեղադրում	հատ	2000
157	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	հատ	6000
158	Ապակեամբարձիչի հանում և տեղադրում	հատ	6000
159	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	հատ	1000
160	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	2500
161	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	2500
162	Լապտերների կարգավորում	հատ	3000
163	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	2000
164	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	1000
165	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	15000
166	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	հատ	12000
167	Թարթիչի միացման լծակի հանում և տեղադրում	հատ	5000
168	Մարտկոցի հանում և տեղադրում	հատ	2000
11. Այլ ծառայություններ			
169	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	քառ.դմ.	3000
170	Անիվի հանում և տեղադրում	հատ	1000
171	Անվաղողի քանդում և հավաքում	հատ	500
172	Անիվի հավասարակշռում	հատ	1000
173	Նստարանի հանում և տեղադրում	հատ	5000
174	Ծածկոցի ճոպանի հանում և տեղադրում	հատ	4000

175	Դիմապակու հանում և տեղադրում	հատ	20000
176	Դռան պաստառի հանում և տեղադրում	հատ	3000
177	CO-զոդման աշխատանքներ	սմ	1500
178	Արզոնե-զոդման աշխատանքներ	սմ	2000
179	Խառատային աշխատանքներ	կտոր	3000
180	Փականագործի աշխատանքներ	ժամ	2000
181	Ավտոքարշակի ծառայություն (ք.Երևան)		8000
	Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Շարժիչ		
1	Բարձիկ	հատ	8000
2	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	10000
3	Շարժիչի բաշխիչ լիսեռ	հատ	30000
4	Շարժիչի փական դուրս մղող	հատ	2000
5	Շարժիչի փական ներս մղող	հատ	2000
6	Շարժիչի փականի խցուկ	հատ	1000
7	Ուղղորդիչ վռան	հատ	2000
8	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	հատ	5000
9	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	հատ	4000
10	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	լրակազմ	10000
11	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	լրակազմ	10000
12	Հենակային տափօղակ	հատ	5000
13	Մխոց	հատ	10000
14	Մխոցային օղակներ	լրակազմ	15000
15	Ատամնանիվ	հատ	8000
18	Շղթա	հատ	20000
19	Հիդրոձգան	հատ	10000
21	Հիդրոհրիչ	հատ	15000
22	Բաշմակ	հատ	4000
23	Հանգստարար	հատ	3000
24	Խցուկ բաշխիչ լիսեռի	հատ	1000
25	Շկիվ	հատ	10000
26	Շարժաթև	հատ	10000
27	Կարտերի միջադիր	հատ	5000
28	Առջևի կափարիչի միջադիր	հատ	4000
29	Վերևի կափարիչի միջադիր	հատ	5000
30	Միջադիր	հատ	6000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
31	Յուղ շարժիչի կիսասինթետիկ 10W-40	լիտր	3500
32	Յուղ շարժիչի սինթետիկ 5W-30	լիտր	5000
33	Յուղի գտիչ	հատ	3000
34	Յուղի պոմպ	հատ	10000
35	Յուղի պոմպի շարժաբեր	հատ	12000
33	Յուղի ռադիատոր	հատ	10000
37	Յուղի փողրակ	հատ	2000
38	Յուղի ծորակ	հատ	2000
39	Վառոցքի մոմ	հատ	3000
42	Ինժեկտորի ֆորսունկա	հատ	20000
43	Վառելանյութի մղիչ էլեկտրական	հատ	15000
44	Վառելանյութի մղիչ մեխանիկական	հատ	

45	Վառելանյութի գտիչ կոշտ մաքրման	հատ	10000
46	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	հատ	6000
47	Վառելանյութի փողրակ	հատ	8000
48	Օդի գտիչ	հատ	5000
49	Օդորակիչի գտիչ	հատ	6000
50	Ջերմաստիճանային տվիչ	հատ	5000
51	Յուղի տվիչ	հատ	5000
52	Բաշխիչ լիսեռի տվիչ	հատ	5000
53	Ծնկաձև լիսեռի տվիչ	հատ	5000
54	Մաքրող հեղուկ ABRO	հատ	2500
55	Օդի ծախսի տվիչ	հատ	30000
56	Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակ	հատ	3000
57	Արագաչափի տվիչ	հատ	5000
58	Բենզոլաքաքի տվիչ	հատ	10000
59	Մարման ընթացքի կարգավորիչ	հատ	10000
60	Ղեկավարման համակարգիչ	հատ	100000
61	Հետընթացի տվիչ	հատ	6000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
62	Հովհար	հատ	15000
63	Ռադիատոր	հատ	45000
64	Ընդարձակող բաք	հատ	7000
65	Ընդարձակող բաքի փական	հատ	5000
66	Հովացման համակարգի փողրակ	հատ	5000
67	Թերմոստատ	հատ	10000
68	Ջրի պոմպ	հատ	15000
69	Սառեցման հեղուկ	լիտր	2000
70	Հոլովակ	հատ	5000
71	Փոկ	հատ	10000
72	Փոկ կոնդիցիոների	հատ	8000
73	Ծորակ	հատ	6000
74	Խլարարի ներդիր	հատ	2000
75	Խլարարի կախոց	հատ	1000
76	Կրոնշտեյն	հատ	1000
77	Անուր (Իսամուտ)	հատ	500
78	Վառարանի ռադիատոր	հատ	15000
79	Վառարանի շարժիչ	հատ	15000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
80	Կցորդման բանվորական գլան	հատ	10000
81	Կցորդման գլխավոր գլան	հատ	10000
82	Կցորդման տանող սկավառակ	հատ	20000
83	Կցորդման տարվող սկավառակ	հատ	13000
84	Կցորդման առանցքակալ	հատ	10000
85	Կցորդման փողրակ	հատ	5000
86	Կցորդման ճոպան	հատ	5000
87	Կցորդման եղան	հատ	2000
88	Կցորդման եղանի փոշեթիկնոց	հատ	500
89	Կցորդման հեղուկի տարա	հատ	4000
90	ՓՏ-ի խցուկ	հատ	5000
91	ՓՏ-ի առանցքակալ	հատ	10000
92	ՓՏ-ի լիսեռ	հատ	15000
93	ՓՏ-ի եղանիկ	հատ	5000
94	ՓՏ-ի ատամնանիվ	հատ	20000
95	Համաժամիչ	հատ	10000
96	Մուֆտ	հատ	8000
97	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	հատ	5000

100	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	6000
102	Հերմետիկ	հատ	2000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
103	Բաշխիչ տուփի խցուկ	հատ	5000
104	Բաշխիչ տուփի առանցքակալ	հատ	6000
105	Բաշխիչ տուփի ատամնանիվ	հատ	20000
106	Բաշխիչ տուփի լիսեռ	հատ	15000
107	Էլաստիկ մուֆտ	հատ	10000
108	Կարդանային լիսեռի խաչուկ	հատ	10000
109	Հեղույս մանեկ	հատ	500
6. Առջևի և հետևի կամրջակներ			
110	Դիֆֆերենցիալ	հատ	25000
111	Դիֆֆերենցիալի սատելլիտ	հատ	6000
112	Տանող ատամնանիվի խցուկ	հատ	1000
113	Տանող ատամնանիվի առանցքակալ	հատ	5000
114	Դիֆֆերենցիալի առանցքակալ	հատ	10000
115	Կիսաստնի	հատ	20000
117	Կիսաստնու միջադիր	հատ	500
118	Կիսաստնու խցուկ	հատ	3000
119	Կարգավորիչ տափօղակ	հատ	1000
7. Կախոց			
120	Տրավերս	հատ	20000
121	Ձախ կամ աջ հողակապ	հատ	20000
122	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	հատ	5000
123	Անվակունդ	հատ	10000
124	Անվակունդի խցուկ	հատ	5000
125	Անվակունդի ներքին առանցքակալ	հատ	5000
126	Անվակունդի արտաքին առանցքակալ	հատ	5000
127	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	հատ	4000
129	Ջսպանակ	հատ	10000
130	Առջևի ցնցամեղմիչ	հատ	30000
131	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	հատ	5000
132	Ցնցամեղմիչի վռան	հատ	1500
133	Ներքևի լծակ	հատ	10000
134	Ներքևի լծակի վռան	հատ	1000
135	Վերևի լծակ	հատ	10000
136	Վերևի լծակի վռան	հատ	1000
137	Գնդե հողակապ	հատ	5000
138	Առջևի կայունարարի վռան	հատ	3000
139	Հետևի կայունարարի վռան	հատ	3000
140	Կայունարարի կանգնակ	հատ	5000
141	Հետևի զսպանակ	հատ	10000
142	Հետևի ցնցամեղմիչ	հատ	20000
143	Հետևի մետաղաձող (շտանգա)	հատ	6000
144	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	հատ	5000
145	Անկյունագծային լծակի վռան	հատ	500
146	Շկվոռնի	հատ	8000
147	Շկվոռնու լատուներ տակդիր	հատ	2000
148	Ջսպակի վռան	հատ	2500
149	Ջսպակի միջադիր	հատ	200
150	Ջսպակի բռնիչ	հատ	1000
151	Աջ կամ ձախ ձգան	հատ	5000
152	Ծայրակալ	հատ	5000
153	Ձգան մեջտեղի	հատ	5000

154	Քսայուղ լիտր	գրամ	1500
155	Քսայուղ Շոուս	գրամ	1500
8. Ղեկային մեխանիզմ			
156	Ղեկային կալուն	հատ	60000
157	Ղեկային կալունի առանցքակալ	հատ	5000
158	Ղեկային կալունի խաչուկ	հատ	15000
159	Հիդրոուժեղարարի փոկ	հատ	6000
160	Հիդրոուժեղարարի փողրակ	հատ	10000
161	Հիդրոուժեղարարի պոմպ	հատ	60000
162	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	հատ	5000
163	Հիդրոուժեղարարի յուղ	լիտր	5000
9. Արգելակային համակարգ			
167	Գլխ. գլան	հատ	10000
168	Վակուումային ուժեղարար	հատ	10000
169	Բանվ. գլան	հատ	10000
170	Արգելակային փողրակ	հատ	5000
171	Սուպպորտի ուղղորդիչ	հատ	1000
172	Սուպպորտի մանժետ	հատ	500
173	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	15000
174	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	17000
175	Առջևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	15000
176	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	15000
177	Ձեռքի արգելակի ճոպան	հատ	6000
178	Արգելակային հեղուկ՝ DOT-4 (300գր)	հատ	2000
179	Ձեռքի արգելակի լծակ	հատ	10000
10. Էլեկտրասարքավորում			
180	Գեներատորի դիողային կամրջակ	հատ	5000
181	Գեներատորի ռեյե	հատ	15000
182	Գեներատորի առանցքակալ	հատ	5000
183	Գեներատորի խարիսխ	հատ	10000
185	Ստարտերի ռեյե	հատ	4000
186	Ստարտերի ածուխ	հատ	7000
187	Բենդեքս	հատ	10000
188	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	հատ	8000
189	Ստարտերի խարիսխ	հատ	15000
190	Լամպ	հատ	2000
191	Էլեկտրական անջատիչ	հատ	2000
192	Էլեկտրական տվիչ	հատ	3000
193	Բոնկման կողպեք	հատ	10000
194	Վառոցքային լարերի խուրձ	հատ	15000
195	Վառոցքի մոմի ծայրակալ	հատ	2500
196	Վառոցքի կոճ	հատ	15000
197	Ազդանշան	հատ	4000
198	Ապակեվազիչ	հատ	3000
199	Ապակեվազիչի պոմպ	հատ	8000
200	Ապակեվազիչի հեղուկի տարա	հատ	5000
201	Ապակեմաքրիչի շարժիչ	հատ	10000
202	Դռների էլեկտրական փական	հատ	1500
203	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1 քառ. դմ. վերանորոգման համար	քառ.դմ.	2000

Հ/հ	NISSAN X-TRAIL 2015 NISSAN X-TERRA 2008 HYUNDAI GENESIS 2012	Զ/Տ	
1	Համակարգչային ախտորոշում	հատ	4000
2	Ընդհանուր տեխնիկական ախտորոշում	հատ	4000
	1.Շարժիչ		
3	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	40000
4	Շարժիչի վերանորոգում	հատ	90000
5	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	հատ	5000
6	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	հատ	9000
7	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	հատ	25000
8	Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	հատ	2000
9	Շարժիչի գլխիկի հղկում/վերանորոգում	հատ	30000
10	Փականի խցուկի փոխարինում	հատ	500
11	Կափույրի բնիկի նորոգում	հատ	2000
12	Կափույրի ուղղորդիչ վռանի փոխարինում	հատ	2500
13	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	հատ	500
14	Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում	հատ	15000
15	Ատամնավոր փոկի, շխթայի, հանգստարարի և բաշմակի փոխարինում	հատ	15000
16	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	1500
17	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	1500
18	Ծնկաձև լիսեռի հղկում	հատ	10000
19	Մխոցային օղակների փոխարինում	լրակազմ	15000
20	Կարտերի հանում և տեղադրում	հատ	10000
21	Քիմիական լվացում 1 կտորի համար	հատ	3000
22	Կալեկտորի հանում և տեղադրում	հատ	8000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
23	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	հատ	1000
24	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	հատ	1000
25	Յուղի պոմպի փոխարինում	հատ	5000
26	Ղեկավարման բլոկի վերանորոգում	հատ	20000
27	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում	հատ	5000
28	խառնարակի հանում և տեղադրում	հատ	5000
29	խառնարակի վերանորոգում	հատ	5000
30	Օդի գտիչի փոխարինում	հատ	1500
31	Օդորակիչի գտիչի փոխարինում	հատ	1500
32	հնժեկտորի ֆորսունկանների հանում և տեղադրում	լրակազմ	10000
33	հնժեկտորի ֆորսունկանների մաքրում	լրակազմ	12000
34	Բենզամղիչի հանում և տեղադրում	հատ	8000
35	Վառելիքի գտիչի փոխարինում	հատ	4000
36	Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում	հատ	3000
37	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	հատ	10000
38	Վառելիքի բաքի վերանորոգում, լվացում	հատ	9000

39	Ակսելերատորի հանում և տեղադրում/մաքրում	հատ	5000
3. Սառեցման և արտաժման համակարգ			
41	Փոկի հանում և տեղադրում	հատ	3000
42	Հովհարի հանում և տեղադրում	հատ	5000
43	Ռադիատորի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	10000
44	Ռադիատորի վերանորոգում	հատ	15000
45	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	8000
46	Թերմոստատի փոխարինում	հատ	5000
47	Զրի պոմպի փոխարինում	հատ	5000
48	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	3000
49	Խլարարի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	5000
50	Խլարարի ներդիրի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	1000
51	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում/փոխարինում	հատ	2000
52	Վառարանի շարժիչի հանում և տեղադրում	հատ	13000
53	Վառարանի ծորակի հանում և տեղադրում	հատ	3000
54	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	2000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
55	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	6000
56	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	լրակազմ	15000
57	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	հատ	2000
58	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	հատ	3000
59	Կցորդման փողրակի փոխարինում	հատ	2000
60	Կցորդման երկժանիի փոխարինում	հատ	2000
61	Կցորդման կարգավորում	հատ	1500
64	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	հատ	8000
65	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	հատ	2000
66	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	40000
67	ԱՓՏ-ի վերանորոգում	հատ	100000
68	ԱՓՏ-ի և ՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	հատ	10000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
69	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	հատ	15000
70	Բաշխիչ տուփի վերանորոգում	հատ	20000
71	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	հատ	5000
72	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	5000
73	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	հատ	5000
74	Էլաստիկ մուֆտի հանում և տեղադրում	հատ	5000
75	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	հատ	2000
76	Միջանկյալ կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	1000
6. Առջևի և հետևի կամրջակներ			
77	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	հատ	20000
78	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	հատ	20000

79	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	հատ	10000
80	Տանող ատամնանիվի խցուկի փոխարինում	հատ	5000
81	Կամրջակի խցուկի փոխարինում	հատ	2000
82	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադրում	հատ	3000
83	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	հատ	500
84	Կիսաստնու խցուկի փոխարինում	հատ	500
7. Կախոց			
85	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	18000
86	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	հատ	7000
87	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	8000
88	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	1500
89	Անվակունդի բացակի կարգավորում	հատ	1000
90	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	8000
91	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	հատ	500
92	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	4000
93	Չսպանակի հանում և տեղադրում	հատ	500
94	Չսպակի հանում և տեղադրում	հատ	2000
95	Չսպակի վռանների փոխարինում	հատ	500
96	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	5000
98	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	4000
99	Ներքևի լծակի վռանների փոխարինում	հատ	1000
100	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	4000
101	Միջին ձգանի հանում և տեղադրում	հատ	4000
103	Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	4000
